

**Ն Ա Խ Ա Գ Ծ Ի Հ Ա Կ Ի Բ Ճ Ն Կ Ա Ր Ա Գ Ր Ո Ի Թ Յ Ո Ի Ն**

Պրակտիկան ցույց է տալիս, որ դասավանդման պրոցեսում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը նպաստում է աշակերտների կողմից ուսումնասիրվող նյութի նկատմամբ հետաքրքրության կտրուկ աճին, որն էլ իր հերթին բերում է ուսման արդյունավետության և որակի աճի:

Ներկայացվող թեմայի շրջանակում աշխատանքային խումբը մշակելու և ներկայացնելու է աստիճանական բարդացման սկզբունքով կազմված ֆիզիկական խնդրաշարքեր, որոնք ներառում են ինչպես տիպային և կարևոր դասագրքային խնդիրներ, այնպես էլ ստեղծագործական մտածողություն զարգացնող ոչ ստանդարտ ֆիզիկական խնդիրներ: Վերը նշված խնդիրների լուծումները ներկայացվելու են քննարկվող ֆիզիկական երևույթների դինամիկան ի ցույց դնող շարժուն տեսապատկերներով՝ օգտվելով Microsoft Office Power Point ծրագրից, որը հնարավորություն կտա նյութին ցանկացած ծանոթացողին՝ լինի ուսուցիչ թե աշակերտ առանց հատուկ ծրագրերի իմացության ստեղծագործաբար զարգացնել ուսումնասիրվող թեման:

Որպես թեմայի շրջանակում կատարված աշխատանքի վերջնարդյունք նպատակ է դրվում պատրաստել խնդիրների լուծումներն ու թեմային առնչվող համառոտ տեսական նյութը պարունակող խտասկավառակներ և հրատարակել գիտամեթոդական հոդվածներ: